

ՔԱՂՈՒԱԾ ՍԱՀՄԱՆԱՅ

ԽԱՂԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ

ԱԶԳԻՍ ՀԱՅՈՅ.

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ.

ա) Թէոդոսիոյ մէջ բացուած ազգային ուսումնարանը, իյնշատակ այն առատաձեռն նպաստից զորս բրեր է անոր համար Խալիպեան Յարութիւն ազգասէր իշխանը, Կայսերական վճռով կոչուած է Խալիպեան Ուսումնարանը ԱԶԳԻՆ ՀԱՅՈՅ:

բ) Այս ուսումնարանը Տէրութեան յատուկ պաշտպանութեանը ներքեւ կգտնուի, առանձնական դպրոցաց կարգին մէջ կհամարուի, եւ առհասարակ Հայազգի պատանեաց կրթութեանը համար բացուած է:

գ) Ուսումնարանին կառավարութիւն անդհներն են

- 1, ԽԵԱՄԱԿԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ.
- 2, ՎԵՐԱՏԵՍՈՒԶ.
- 3, ՕԳՆԱԿԱՆ ՎԵՐԱՏԵՍՈՒՆ.
- 4, ՏԵՍՈՒԶ.
- 5, ԿԱՐԳԱՊԵՏ.
- 6, ՏՆՏԵՍ.
- 7, ԺՈՂՈՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԱՅ:

դ) Խնամակալի անունը պահուած է Խալիպեան Յարութիւն իշխանին: Նորա գլխաւոր պաշտօնն է՝ ուսումնարանին բարեկարգութեանն ու յառաջադիմութեանը վրայ փոխել եւ խնամք ունենալ, եւ մասնաւորապէս ուսումնարանին մէջ ձրիաբար կրթութեան Խալիպեան սանից ընտրութիւնն ընել:

ե) Ուսումնարանին Վերատեսուչը անոր անմիջական եւ գլխաւոր տէրն ու կառավարիչն է: Նա կընտրէ իրեն օգնականը, տեսուչը, կարգապետը, վարժապետները, վերակացուները, նմանապէս դասառութեան գրքերը եւ դասախօսութեանց ոճերը:

զ) Վերատեսչին Օգնականը՝ վերատեսչին պաշտօնը կկատարէ, երբ նա տեղ մը երթայ կամ հիւանդանայ:

է) Տեսուչը Վերատեսչին արած կարգադրութիւններուն գլխաւոր եւ անմիջական կատարողն է. նորա պարտն է հսկել դասարաններուն բարեկարգութեանը եւ ընդհանրապէս բոլոր ուսումնարանին կառավարութեանը վրայ:

ը) Կարգապետը Տեսչին օգնականն է, եւ նորա սեպհական պաշտօնն է ուսումնարանին կարգերն ու կանոնները պահել տալ աշակերտաց, եւս եւ յիշեցընել վարժապետաց եւ վերակացուաց իրենց պարտքերը՝ երբոր զանցառութիւն ընեն:

թ) Տնտեսը աշակերտաց կերակրոյն եւ հանդերձեղէնին անմիջական հոգն ունի՝ Տեսչին կառավարութեանը ներքեւ:

ժ) Հոգաբարձուաց Ժողովոյն իշխանութեանը ներքեւն է ուսումնարանին թէ՛ ուսումնական եւ թէ՛ տնտեսական ընդհանուր կառավարութիւնը: Ժողովոյն գահերէցն է վերատեսուչը, եւ անդամք՝ նորա օգնականը, տեսուչը, եւ վերատեսչին ընտրած անձինքը՝ թէ՛ վարժապետաց մէջէն եւ թէ՛ գրասէն:

Բ. ԱՇԱԿԵՐՏԳ.

ժա) Խալիպեան ուսումնարանին աշակերտները երեք կարգ կբաժնուին.

- ա. Լիաթոշակք.
- բ. Կիսաթոշակք.
- գ. Զրիավարժք:

Ամէնքն ալ ուսումնարանին մէջ կընակին, եւ միակերպ է ամենուն սնունդը, հագուստը, եւ ամենայն պէտք եղած խնամքը:

ժբ) Աշակերտաց թիւը սահմանուած չէ, բայց ընդհանրապէս ուսումնարանին շէնքին մեծութեանը եւ ապրուստին կամ եկամտին նայելով կորոշուի: — Առ այժմ՝ աշակերտաց մէջէն 20-ը Խալիպեան սանի պիտի ըսուին, եւ Խնամակալին արգեամբքը դաստիարակուին. 50-ը եկեղեցականաց որդիք կամ եկեղեցականութեան փափաքողներ են, եւ սորա ընդհանրապէս Նախիջեւանի ու Պեսարապիոյ վիճակին եկեղեցական գումարներովը կպահուին. մնացեալ ամէնքն ալ իրենց ծնողաց կամ ազգականացը հաշուին են:

ժգ) Ամէն մէկ աշակերտին վճարելու տարեկան թոշակն է երկուսուսուս յիսուն (250) բուպլի արծ: Անկէց իզատ, աշակերտին ուսումնարան մտած ժամանակը՝ միայն մէկ անգամ վճարուելու հանդերձադինը՝ յիսուն (50) բուպլ: — Ճանապարհի ծախքը աշակերտաց վրայ է:

ծդ) Կիսաթոշակ աշակերտաց կարգն են երկու կամ երեք եղբարք մէկը. այսինքն երբոր երկու կամ երեք եղբարք մէկտեղ գտնուին ուսումնարանին մէջ, մէկուն համար պիտի վճարուի 175 ռուպլի, երկրորդին կամ երրորդին համար 250: — Կիսաթոշակ աշակերտք ալ պարտական են հանդերձագինը վճարել, այսինքն 50 ռուպլին:

ժե) Աշակերտաց թոշակին հատուցումը տարին երկու անգամ կլինի, այսինքն վեց ամսէ վեց ամիս. թոշակին առաջին կէտը կվըճարուի՝ նոցա ուսումնարան մտած ժամանակը, հետո ալ հանդերձագինը. եւ երկրորդ կէտը՝ վեց ամսէն ետեւ:

ձգ) Իւրաքանչիւր աշակերտ թէ՛ լիաթոշակ եւ թէ՛ կիսաթոշակ, պէտք է բերէ հետը իւր տնէն

- | | |
|------------------|--------------------|
| 12 շապիկ. | 6 երեսորբիչ. |
| 12 վարտիք. | 6 սաւան. |
| 12 թաշկինակ. | 6 անձեռոց սեղանոյ. |
| 12 զոյգ գուրպայ. | 4 զոյգ կօշիկ: |

ժե) Ուսումնարան մտնող աշակերտաց տարիքը 14-էն վեր եւ 8-էն վար պիտի չլինի:

ՈՒՍՄՈՒՆՔ.

ժր) Խալիպեան ուսումնարանին մէջ վեց դասարան (խաւ) կայ, որոց մէջ զատ տրուած ուսման նիւթերն ասոնք են ընդհանրապէս, եւ գրեթէ այս բաժանմամբ.

ԱՌԱՋԻՆ ԳԱՍԱՐԱՆ.

Հրահանգ Քրիստոնէական հաւատոյ, համառօտ. Պատմութիւն Հին Կտակարանի, համառօտ. Բարեկրթութեան կանոնք. Նախակրթմանը հայերէն լեզուի, այսինքն ընթերցումն եւ թարգմանութիւն. Նախակրթմանը ռուսերէն լեզուի, ընթերցումն եւ թարգմանութիւն. Նախակրթմանը գաղղիարէն լեզուի, ընթերցումն եւ թարգմանութիւն. Աշխարհագրութիւն, ընդհանուր գիտելիք. Թուարանութեան առաջին մասն. Գեղագրութիւն:

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՍԱՐԱՆ.

Հրահանգ Քրիստոնէական հաւատոյ, ընդարձակ. Պատմութիւն Նոր Կտակարանի, համառօտ. Քերականութիւն հայերէն լեզուի, առաջին մասն. Քերականութիւն ռուսերէն լեզուի, առաջին մասն. Քերականութիւն գաղղիարէն լեզուի, առաջին մասն. Պատմութիւն Հին ազգաց, համառօտ. Պատմութիւն Հայոց, համառօտ. Աշխարհագրութիւն քաղաքական. Թուարանութեան երկրորդ մասն. Գեղագրութիւն:

ԵՐՐՈՐԴ ԳԱՍԱՐԱՆ.

Հրահանգ Քրիստոնէական հաւատոյ, ընդարձակ. Պատմութիւն Հին Կտակարանի, ընդարձակ. Քերականութիւն հայերէն լեզուի, երկրորդ մասն. Քերականութիւն ռուսերէն լեզուի, երկրորդ մասն. Քերականութիւն գաղղիարէն լեզուի, երկրորդ մասն. Պատմութիւն Յունաց եւ Հռովմայեցոց. Պատմութիւն Հայոց, ընդարձակ. Աշխարհագրութիւն Հին եւ Նոր Հայաստանի. Աշխարհագրութիւն Ընդհանուր. Պատմութիւն Ռուսաց եւ Օսմանեանց. Թուարանութեան երկրորդ մասն. Գեղագրութիւն:

ՉՈՐՈՐԴ ԳԱՍԱՐԱՆ.

Հրահանգ Քրիստոնէական հաւատոյ, ընդարձակ. Պատմութիւն Նոր Կտակարանի, ընդարձակ. Ճարտասանութեան կանոնք. Կրթութիւն հայերէն շարագրութեան եւ թարգմանութեան. Կրթութիւն ռուսերէն շարագրութեան եւ թարգմանութեան. Կրթութիւն գաղղիարէն շարագրութեան եւ թարգմանութեան. Պատմութիւն Միջին դարոյ. Պատմութիւն Հայոց. Աշխարհագրութիւն Ընդհանուր. Պատմութիւն Ռուսաց եւ Օսմանեանց. Աշխարհագրութիւն բնական եւ ուսումնական. Երկրաբանութեան առաջին մասն. Նկարչութիւն:

ՀԻՆԴԵՐՈՐԴ ԳԱՍԱՐԱՆ.

Բարոյական իմաստասիրութիւն. Տրամաբանութիւն. Պատմութիւն հին եւ Նոր մատենագրութեան Հայոց, Ռուսաց եւ Գաղղիացոց. Կրթութիւն շարագրութեան եւ գրուցատրութեան Հայոց, Ռուսաց եւ Գաղղիացոց. Պատմութիւն Նոր ազգաց. Պատմութիւն Ռուսաց եւ Օսմանեանց. Հաշուետուար վաճառականութեան. Բնական պատմութիւն կենդանեաց, բուսոց եւ հանքաց. Իրաւագիտութիւն ընդհանուր. Երկրաբանութեան Բ մասն եւ Եռանկիւնաբանութիւն. Նկարչութիւն:

ՎԵՅԵՐՈՐԴ ԳԱՍԱՐԱՆ.

Բարոյական իմաստասիրութիւն եւ Տրամաբանութիւն. Կրթութիւն հայերէն շարագրութեան եւ տաղաբանութեան. Կրթութիւն ռուսերէն եւ գաղղիարէն շարագրութեան եւ գրուցատրութեան. Պատմութիւն ընդհանուր հին եւ Նոր մատենագրութեան. Բնագիտութիւն եւ քննադատութիւն. Օրէնսգիտութիւն Ռուսաց. Նկարչութիւն:

ժր) Այս վեց դասարանէն զատ կայ Նախալրդարան մը, ուր կմտնեն այն նորեկ աշակերտներն որ առաջին դասարանը մտնելու համար պէտք եղած գլխաւոր ուսմունքները գեռ չեն սովորած: Վասն զի նոր աշակերտ որ գայ ուսումնարանը, համառօտ քննութենէ մը կանցնի, եւ ըստ այնմ կմտնէ վեց դասարանէն մէկը:

ի) Ուսումնարանին մէջ եղած ամէն ուսմունքներն ալ պարտական են սովորելու աշակերտները, իրենց կարողութեանը համեմատ: Միայն ռուսերէն լեզուին ուսմունքէն ազատ

մնալ ուղղները (այսինքն Տաճկաստանէն եկող աշակերտները) ազատ են նաեւ Ռուսաց պատմութիւնը, մատենագրութիւնը եւ օրէնսգիտութիւնը սովորելէն:

իա) Ուսումնարանին մէջ դասախօսութիւնները առհասարակ հայերէն լեզուով կ'լինին. բայց Ռուսաց լեզուի, Ռուսաց պատմութեան եւ մատենագրութեան դասերը ռուսերէն կ'որոշուին, նմանապէս Գաղղիացոց լեզուի եւ մատենագրութեան դասերը գաղղիարէն: — Բաց յայնմանէ բարձրագոյն ուսմանց մէկ քանին առ այժմ գաղղիարէն, մէկ քանին ալ ռուսերէն կրնան տրուիլ:

իբ) Ուսման վերոյգրեալ նիւթերէն դուրս ինչ լեզու կամ գեղարուեստ որուդէ մէկը դաս առնուլ տալ իւր որդւոյն այս ուսումնարանիս մէջ, զոր օրինակ՝ յունարէն կամ լատիներէն կամ գերմաներէն, եւ երաժշտութիւն, կամ զինավարժութիւն, նոցա համար սահմանեալ առանձին վճարքը պիտի հատուցանէ:

իզ) Տարեկան հանգստեան կամ պարապոյ միջոցը ամբողջ Յուլիս ամիսն է. եւ այն միջոցը կարող են աշակերտք իրենց աներն երթալ՝ եթէ ծնողք կամենան, եւ ճանապարհի ծախքը վճարեն:

Գ. ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ.

իզ) Խալիպեան ուսումնարանին ապրուստին ու պահպանութեանը աղբիւրներն են. ա, Խալիպեան Յարութիւն իշխանին նուիրած դրամագլխոյն եկամուտները. բ, Նախիջեւանի եւ Պեսարապիոյ վիճակին դրամագլխոցն եւ եկամուտներուն մէկ մասը. գ, Աշակերտներուն բերած թոշակները. եւ դ, Ուսումնարանին քով բացուած տպարանին աւ գրասենեկին եկամուտները: — Ուսումնարանին պահպանութեան աղբիւրներուն կարգը կ'համարուին նաեւ բարեպաշտ եւ ազգասէր անձանց ըրած նպաստները:

իե) Մեծ մտադրութիւն եւ ջանք կայ որ աշակերտաց կերակուրը չափաւոր լինի եւ սննդաբար, ննջարանը մաքուր եւ օդահար, աշխատութիւնը զբօսանքով բարեխառնած, եւ ընդհանրապէս նոցա առողջութիւնը որչափ որ կարելի է խոհական չարքաշութեամբ ամբըցած:

իզ) Ուսումնարանին բժիշկը ամէն օր անպակաս այցելութիւն կ'ընէ հիւանդանոցին, ուր մասնաւոր Հիւանդապահ կայ:

իե) Աշակերտաց հազուադէպ երկու տեսակ է, երկուքն ալ միաձեւ ու միօրինակ. մէկը դուրսը հագնելու՝ կապտադոյն չուխայէ, կայսերական հրամանաւ հաստատուած (մունսիր), մէկալը ներսը՝ ձմեռը սեւ չուխայէ, ամառը սեւ գունաւոր կտաւէ: — Ճերմակեղէնները ամառը շաքարի երկու անգամ կ'իտխուին, ձմեռը մէկ անգամ: Այս բաներուն եւ ընդհանրապէս տղայոց մաքրութեանը յատկապէս ուշ դնողը Հանդերձապահն է:

Ե. ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ.

իբ) Ուսումնարանին մէջ սաստիկ մտադրութիւն կ'լինի որ աշակերտք իրենց քրիստոնէական պարտքերը անպակաս եւ անպատճառ կատարեն. եւ կանոնապահ, հնազանդ, եղբայրասէր եւ քաղաքավար, համեստ եւ առաքինի լինելու ջանք ընեն:

իբ) Աշակերտք ոչ երբեք մինակ կ'մնան, եւ ոչ մինակ քալելու կամ զբօսանքի կելլեն, այլ միշտ վերակացու կ'ըրանուի հետերը. գիշերն ալ՝ բաց ի վերակացուէ՝ պահապան մը կ'հրկէ ննջարաններուն մէջ:

լ) Ամենայն աշակերտ պարտական է ամիսը մէկ անգամ նամակ գրելու իւր ծնողաց կամ ազգականաց: — Նամակներուն ծախքը ծնողաց վրայ է:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Երբոր դպրոցի մը հիմունքը լինին երկիւղ Աստուծոյ եւ սէր առաքինութեան, երբոր աշակերտք սիրեն դպրոցը եւ պատկառին վարժապետներէն, երբոր վարժապետք իրենց նիւթական շահէն աւելի փնտռեն աշակերտաց կրթութիւնն ու յառաջադիմութիւնը, — նորա ամենայն կանոններն աղէկ կ'պահուին, եւ բարեկարգութիւնը անդրդուելի հաստատութիւն կ'ունենայ: